

ՄԻ ԱՆՀԱՋՈՂ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ ժողովրդագրություն կից Զե-
ռագրատան (Մատենադարանի) կողմից հրաա-
րակված Կիտական նյութերի ժողովածուի Թ
1-ում տեղավորված է պրոֆ Ա. Աբրահամյա-
նի կազմած՝ հայկական ՍՍՌ Մատենադարանի
գրչադիր մանր ժամանակագրությունների հա-
մառոտ բիրլիոգրաֆիան։ Անվիճելի է պրոֆ.
Աբրահամյանի նախաձեռնությամբ անհրաժեշ-
տությունը։ Սակայն պետք է նշել, որ կատար-
ված աշխատանքը ներկա վիճակով հեռու է
գիտական պահանջները բավարարելուց։ Ինք-
նիշատակ է և աղաղակող անճշտություն-
ներով, սխալ ընդօրինակություններով, մոլո-
րեցնող տվյալներով և թյուրիմացություննե-
րի հիման վրա կառուցված ոչ ճիշտ եզրա-
կացություններով։ Սրանում համոզվելու հա-
մար բերենք մի քանի փաստեր։

Ժողովածուի 216-րդ էջում, պրոֆ. Աբրա-
համյանը նշում է № 1693 և № 1723 ձեռագիր
ժողովածուները, որոնց մեջ իբր թե գտնվում
են ժամանակագրություններ, նշում է նույն-
իսկ էջերը, մինչդեռ № 1683 ձեռագիրը իմաս-
տասիրական նյութերի ժողովածու է և ոչ մի
ժամանակագրություն չի պարունակում, իսկ
№ 1723 ձեռագիրը բովանդակում է Մխիթար
Այրիվանեցու Պատմությունը և Արիստոսի
իմաստասիրական մի քանի երկերը՝ Պերիա-
մենիաս, Ստորագրություն և այլն։ Սխալ է
ցույց արված նաև № 1511 ձեռագիրը (ժողո-
վածուի 214-րդ էջ), որտեղ իբր գտնվում է
Փրիգոր Կամախեցու Թարեխ Տաճկաց ժա-
մանակագրությունը։ Վերահիշյալ ձեռագիրը
յայտնվում է և որևէ ժամանակագրություն
չի պարունակում։ Բիրլիոգրաֆիայում հաճախ
հանդիպում ենք սխալ մատնացույց արված
էջերի, օրինակ, ժողովածուի 219-րդ էջում,
հեղինակը № 1983 ձեռագրի ժամանակագրու-
թյան սկիզբը համարում է 371-րդ էջը և ապա
գրում, «Բուն ժամանակագրությունն ընդգը-
կում է 171—189 էջերը, և նախ՝ նկատենք, որ
վերահիշյալ ձեռագրի էջերի համարակալումը
խառնաշփոթ է, այսպես՝ սկզբից համարակա-
լված է ձեռագրի 1—200 էջը, ապա այս ընդ-
Տիգրակադիր 7—8

հատվում է, շարունակությունը նորից համա-
րակալվում 101—201 համարներով, և և
ընդհանրվում է և Ֆաջաձը համարակալվում
1—141 համարներով և այլն։ Հեղինակը այս
համարակալումներից օրին է հետևել, պարզ
է, ժամանակագրությունը մի դեպքում
սկսվում է 77-րդ էջով, մի այլ դեպքում՝
377-րդ, «Բուն ժամանակագրության» էջերը
ևս սխալ են նշված, իրականում այն ընդգը-
կում է հին համարակալումով 79—88, իսկ նո-
րով՝ 179 ա—183 բ էջերը։

Մի այլ օրինակ, ժողովածուի 208-րդ
էջում № 82 ձեռագրի ժամանակագրության
վերջին էջը նշված է 498, մինչդեռ ժամանա-
կագրությունը վերջանում է 487-րդ էջում
(հին համարակալումով)։ Ժողովածուի 220-րդ
էջում № 2650 ձեռագրի ժամանակագրության
էջերը նշված են այսպես՝ «սկ. թերթ 115 ա, Բ,
գ, վերջ. թերթ՝ 118 բ», իրականում՝ «սկ.՝ 114 բ
էջ, իսկ վերջ՝ 116 բ էջ։ Այսպիսի բազմաթիվ
սխալներ կան։

Հեղինակը՝ նշելով ժամանակագրություն
պարունակող ձեռագրի համարները, երբեմն
մոռանում է նշել ժամանակագրության դրա-
վեցրած էջերը։ Օրինակ՝ նշում է № 6691 ձե-
ռագրի ժամանակագրությունը (ժողովածու
էջ 233), բայց մոռանում է նշել համապա-
տասխան էջերը։ Նույն ձեռք չեն նշված
№ 6354 և № 7117 ձեռագրերի (ժողովածու
էջ 223—224 էջ) ժամանակագրություն պարունա-
կող էջերը։ Կան ձեռագրեր, որոնք ունեն մե-
կից ավելի ժամանակագրություններ։ Այսպիսի
դեպքերում պրոֆ. Աբրահամյանը երբեմն
նշում է ոչ բոլորը։ Օրինակ՝ ժողովածուի
209—210-րդ էջում № 482 ձեռագրի միայն
երկու ժամանակագրություն է հիշվում, մինչ-
դեռ՝ բացի դրանից, կան նաև այլ ժամանա-
կագրություններ՝ ձեռագրի՝ 51 ա, 51 բ—52 ա
և 53 ա էջերում։ Հեղինակը ժողովածուի
215—216-րդ էջերում հիշելով № 1495 ձե-
ռագրի մի քանի ժամանակագրությունները,
չի հիշատակում Հ. Սարկավազի «Յաղագո ժա-
մանակաց և թուականաց» վերնագիրը կրող

ժամանակագրությունը, որը տեղավորված է ձեռագրի 162 ա—163 ա էջերում, ժողովածուի 211-րդ էջում նշելով № 605 ձեռագրի երկու ժամանակագրությունները, մոռանում է՝ ձեռագրի 203 ա—219 ր էջերում տեղավորված ժամանակագրությունը, նման փաստերը մեջբերվածով չեն սպառվում:

Ըրբլիոգրաֆիայում բնագրերից մեջ բերված հատվածները հաճախ ընդօրինակված են սխալ, երբեմն էլ՝ խմբագրված: Օրինակ, ժողովածուի 217-րդ էջում, № 1786 ձեռագրից բերված հատվածը՝ «Թվիս ՌԾԶ, փետրվար ԻԱ, փոքր թվիս ՂԱ, նիհրան Ը աուր ուրբաթու ինքնակալն Օվրանգգիր, թագաւորն հնգկաց վաղճանեցաւ»:

Բնագրում՝

«Թվիս ՌԾԾ փետրվար ԻԱ, փոքր թվիս ՂԱ նիհրան Ը աուր ուրբաթու ինքնակալն Օվրանգգիր թագաւորն հնգկաց զվաղճան էառ» (էջ 42 ա): Սխալ է բերված նաև երկրորդ հատվածը:

Ժողովածուի 212-րդ էջում № 713 ձեռագրից բերված հատվածը՝ «Թիւն ՌԾԾԾ, նաւասարդի ուրբաթ օրն, Վալի խանի աղայ Իմամ Ղուլի խանն եկաւ ի Դանձալ թօփգարաղաճն, վերճն աստուծոյ է գիտելի»:

Բնագրում՝ «Թիւն ՌԾԾԾ նաւասարդի ուրբաթ օրն, Վալի խանի աղայ Իմամ Ղուլի խանն եկաւ ի Դանձալ թօփգարաղաճն, վերճն աստուծոյ է գիտելի» (էջ 138 ր):

Ժողովածուի 223-րդ էջում № 5619 ձեռագրի ասթիվ պրոֆ. Արրահամյանը գրում է՝ «Վերջացնում է 1847 թվի սովով «ԶՂԶ ի սոյն ամ եղև սով յարևելք որ բաղումք ի սովոյ մեռան»:

Բնագրում՝ «ՌԾԾԸ (ԶՂԶ) ի սոյն ամի եղև սով յարևելք որ բաղումք ի սովոյ մեռան» (էջ 113 ր):

Ի դեպ, պրոֆ. Արրահամյանը կարծում է, թե այս ժամանակագրությունը վերանում է մեջբերված հատվածով, մինչդեռ ժամանակագրությունը ուրիշների կողմից շարունակվել է: Շարունակությունը գտնվում է մեջբերված հատվածից երեք դատարկ թերթ հետո՝ 117 ա ե ր. և 118 ա էջերում:

Ջարմանալին այն է, որ ժողովածուի 223-րդ էջում № 6691 ձեռագրի մի հատվածը բերելիս, հեղինակը էջմիածնի նվիրակ Սահակ վարդապետի մահվան տարեթիվը թյուրիմացաբար բերում է որպես ուսուցիչ զանի կոստանյուպոլիս մտնելու տարեթիվ, Պաահում է, որ նույն ժամանակագրությունը գտնվում է երկու, կամ մի բանի, ձեռագրերում: Գրոֆ. Արրահամյանը երբեմն թյուրիմացաբար այդպիսի ժամանակագրու-

թյունները համարում է տարբեր ժամանակագրություններ: Այսպես՝ ժողովածուի 214—215 էջերում հեղինակը խոսելով № 1493 ձեռագրում պահված հայոց և պարսից պատմության համառոտ ժամանակագրության մասին, գրում է. «Սկսում է Աղեքսանդր Մակեդոնացուց..... Վերջում նա թվում է անիշխանության ժամանակը և վերջացնում 1679 թվով. «Իսկ ի վերջնոյ ամէ հինգերորդի Լևոնի թագաւորին Սըսոյ մինչ ցառ մեզ են ամբ ԳՃԽԳ (— 1679) և հայոց՝ ՌՃԻԸ» (թերթ 87 ա.): Այս ճիշտ է: Նույն ժամանակագրության մի այլ ընդօրինակությունը գտնվում է № 6354 ձեռագրի 327 ա և ր. ապա 329 ա և ր էջերում: Սակայն, հեղինակը չնկատելով այս նույնությունը գրում է՝ «Սկսում է Աղեքսանդրի նվաճումից և հասցնում մինչև Օշինը (Լևոնի որդի)»... Վերջացնում է 1672 թվով «Եւ ի Քրիստոսէ մինչև ցառ մեզ են ամբ, ՌՈՂԲ, և հայոց ՌՃԽԸ, Ձեռագիրն ընդօրինակված է 1672 թ. (Ժողովածու, էջ 224):

Նախ՝ պրոֆ. Արրահամյանը սխալ է կատարում, երբ բնագրի՝ «մինչև ցվերջին ամս Լևոնի հինգերորդի որդւոյ Օշնի՝ հատվածը հասկանում է մինչև Օշինը (Լևոնի որդի)»: Մինչդեռ հատվածից հրկում է, որ խոսքը վերաբերում է ոչ թե Լևոն հինգերորդի որդի Օշինին, ինչպես կարծում է ընդ. Արրահամյանը, այլ Օշինի որդի Լևոն հինգերորդին: Երկրորդ բնագրի վերջին հատվածի տարեթվերը աղավաղված են, մի բան, որը չի նկատել պրոֆ. Արրահամյանը: Այս տարեթվերի ճիշտ ձևը պահված է № 1493 ձեռագրում, որտեղ համապատասխան հատվածում կարդում ենք. «և ի Քրիստոսէ մինչև ցառ մեզ են ամբ ՌՈՂԲ (— 1679) և հայոց ՌՃԻԸ (— 1128)» (էջ 87 ա):

Որ այս թվերին կարելի է վստահել, այդ ցույց է տալիս, երկու ձեռագրերի, նույն ժամանակագրության վերջին մասում գտնվող հեռակալ հաշիվը՝ Լևոն հինգերորդի թագավորության վերջին տարին նշելով 1336 թիվը. (ՌԳՃԸ) ժամանակագիրը ավելացնում է՝ «Իսկ ի վերջնոյ ամէ հինգերորդի Լևոնի թագաւորին Սըսոյ մինչ ցառ մեզ են ամբ ԳՃԽԳ (— 343)» (№ 1493 ձեռագիր, էջ 87 ա, № 6354 ձեռագիր, էջ 329 ր):

Այսպիսով ստանում ենք՝ 1336 + 343 = 1679. Այս հաշիվը համապատասխանում է № 1493 ձեռագրի տվյալին: Ինչպես տեսնում ենք, խոսքը վերաբերում է մի ժամանակագրության, որը կազմվել է 1679 թվին, որի երկու տարբերակներն են առայժմ մեզ հայանք: Այնուհետև, սխալ է նաև հեղինակի այն պնդումը,

թիվ № 6356 ձեռագիրը ընդօրինակվել է 1672 թվին (Ժողովածու, էջ 224)։ Գուրու է գալիս, քննության ենթակա ժամանակագրությունը № 6356 ձեռագրում ընդօրինակվել է իր կազմվելուց 7 տարի առաջ, մի բան, որ չէր կարող կատարվել։

Մի այլ օրինակ՝ «Ժողովածուի 208-րդ էջում, պրոֆ. Աբրահամյանը խոսելով № 82 ձեռագրի ժամանակագրության մասին, գրում է՝ «Հեղինակը նսայի վարդապետ Թոխատցին է։ Այդ երևում է ժամանակագրության հետևյալ պարբերությունից. ի թուին Հայոց 1209, յուներսի (բնագրում՝ յուներսի - Վ. Հ.) 2 օրն, ցորեկեան 2 սհաթ և կէսին արեգակն խաւարեցաւ այնքան մինչ եղև գիշեր... և եկաց կէս ժամի. և ապա եցոյց զլոյսն սակաւ առ սակաւ. էի յալմմամ նսայի վարդապետս (ընդգծումը հեղինակինն է) ի Թոխաթ (բնագրում՝ Թոխաթ - Վ. Հ.)» (էջ 687)։ Այնուհետև հեղինակը № 82 ձեռագրի ընդօրինակությունը գնում է 1770 թվին։ Իսկ երբ նա խոսում է № 1786 ձեռագրի ժամանակագրության մասին, գրում է՝ «Ժամանակագրությունը գրված է 1683 թ.։ Ընդօրինակել է Մարտիրոս զի Առաքելը 1723 թ.։ (Ժողովածու, էջ 218)։

Ինչպես ասելուս հնք, հեղինակը այս երկու ժամանակագրությունը համարում է տարբեր ժամանակագրություններ։ Մինչդեռ վերոհիշյալ ժամանակագրությունների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք նույն ժամանակագրության երկու տարբեր ընդօրինակություններն են, միայն այն տարբերությամբ, որ № 1786 ձեռագրի ժամանակագրությունը ընդհանուր առմամբ լավ է պահպանված, որտեղ հիշվում է նաև ժամանակագրության կազմվելու ատարեթիվը՝ 1683 թ. և ի յսկզբանէ այնպիսի մինչև ցայժմ, որ է քիւն մարդեւոյութեամ փրկչին 1683. ևն ամբ 6886» (էջ 82 ա)։

Այս համաձայն ընդգծված մասը գուրու է ընկել № 82 ձեռագրի համապատասխան բնագրից (տես էջ 251 ա)։ Այսպիսով, քննության ենթակա ժամանակագրությունները նույնն են և կազմվել են 1683 թվին, Հեռեապետ նսայի վարդապետը, որը ուշ չբացար անձնավորություն է, չէր կարող այդ ժամանակագրության հեղինակը լինել, եթե այս է հիմարությունը, ապա ինչն է պրոֆ. Աբրահամյանին զգել թյուրիմացության մեջ։ Ահա թե ինչը, № 82 ձեռագրի ժամանակագրության վերջում գտնվում է նսայի վարդապետի գրած հիշատակությունը, վերջինս, ինչպես ստորև ցույց կտանք, ոչ մի առնչություն չունի բուն ժամանակագրության հետ։ Գրոֆ. Աբրահամյանը այս հիշատակությունը սխալմամբ հա-

մարում է ժամանակագրության շարունակություն, այստեղից էլ որոշում ժամանակագրության կազմվելու ատարեթիվը և ապա հեղինակի հարցը։ Որպեսզի պարզ դառնա, որ դա մի պարզ թյուրիմացություն է, մեջ ենք բերում նսայի վարդապետի վերահիշյալ հիշատակությունը ամբողջությամբ։

«Ի թուին Հայոց 1209, յուներսի 2 օրն, ցորեկեան 2 սհաթ և կէսին արեգակն խաւարեցաւ այնքան մինչ եղև գիշեր զի և առաւելք մերձք արեգականն հուպ երևեցան, և եկաց կէս ժամի, և ապա եցոյց զլոյսն սակաւ առ սակաւ. էի յայնժամ նսայի վարդապետս ի Թոխաթ. Աստուած բարին եղբերացէ, բայց ըստ ասմարին ասարացոյց Վենետիկոյ սառուղիւ ել, զի գրեալ էր թէ յուներսի 2 օրն 16 ժամն, 33 րոպէ, միայն ժամն ընդ մեր ժամոցն ոչ հաւասար եկն, այլ աւուրն, ուստի եւամագրեցամ զի ասլավայ ժամանակաց իրբ թիւ իմն և նշան առնանիցի»։ էջ 253 ր։ (Ընդգծումը մերն է - Վ. Հ.)։

Որ մեջբերվածը հիշատակություն է և կապ չունի բուն ժամանակագրության հետ, այդ երևում է նրանից, որ հիշատակությունը գտնվում է ձեռագրի 253 ր էջում, իսկ բուն ժամանակագրությունը վերջանում է ձեռագրի 253 ա էջի առաջին կեսում։ Ժամանակագրության և հիշատակության մեջ ընկած է դատարկ կես էջ։ Այսպիսով, եթե մեջբերված համաձայն ժամանակագրության օրգանական մասը լիներ, այն պետք է գրվեր 253 ա էջի դատարկ մասում, Նրկրորդ՝ հիշատակության ընդգծված մասը ցույց է տալիս, որ խոսքը վերաբերում է 1760 թվի հունիսի 2-ի արևի խավարմանը և ժամանակագրության հետ ոչ մի առնչություն չունի։ Նրբորդ՝ ձեռագրի այլ էջերում ես հանդիպում ենք ծավալով ավելի քան հիշատակությունների, որոնք գրված են նույն ձեռագրով, ինչ վերահիշյալ համաձայնը։

Այսպիսով, նսային ոչ թե № 82 ձեռագրի ժամանակագրության հեղինակն է, ինչպես կարծում է պրոֆ. Աբրահամյանը, այլ այդ ձեռագրի մի մասի ընդօրինակողը՝ Վերեսուհի եղբորն էր պրոֆ. Աբրահամյանը № 82 ձեռագրի ընդօրինակությունը գնում է 1770 թվին, այդ բանի համար նա հիմք ունեցել է ձեռագրի 59 ա և ր էջերում գրված հիշատակությունը, ըստ որի «Գիրք որ կոչեցաւ Աստուածանմանութիւն աշխատությունը Հարություն Սարկավազ Հաղթաանցին ընդօրինակել սկսել է 1770 թվի մայիսի 20-ից, էջ-միածնում։

Սակայն պրոֆ. Աբրահամյանը հավանաբար չի նկատել, որ Հարություն Հաղթաանցու ընդօրինակությունը ասելով է մինչև 110 ր

էջը, իսկ ձեռագրի Ձեռագած մասը՝ 111 ա էջից մինչև 258 ա էջը (որի մեջ մտնում է նաև քննության ենթակա ժամանակագրությունը), ոչ թե Հարություն Սարկավագ Հաղբատեցին է ընդօրինակել 1770 թվին, այլ մի ուրիշը նսայի վարդապետ Թոխաթցին 1756—1762 թվերին: Այդ երևում է նրանից, որ № 82 ձեռագրի մեծ մասը՝ 111 ա էջից մինչև 258 ա էջը (եթե չհաշվենք օրինակ՝ 238 ա - 240 բ էջերը, որոնք գրված են հետո) նույն ձեռագրով է գրված: Երկրորդ՝ մեջբերված հիշատակության նման մի շարք էջերում գրիչը կատարել է փոքրիկ նշումներ: Օրինակ՝ ձեռագրի 144 բ էջում գրիչը՝ նսային, վերջացնելով «Վասն իաչի» քարոզի ընդօրինակությունը ավելացնում է՝ «...ՌՄԵ (=1205 թ.), օգոստոսի ժգ յնւդակիայն»:

Կամ՝ 149 ա էջում գրիչը վերջացնելով «Սուրբ Աստուածածնի վերափոխման» քարոզի ընդօրինակումը ավելացնում է՝ «...ՌՄԵ (=1205 թ.), օգոստոս ժ. Թողադ»:

Վերջապես 192 ա էջում գրիչը վերջացնելով աստվածաբանական մի հարց ու պատասխանի ընդօրինակությունը, ներքևի լուսանցքում ավելացնում է՝ «Եղբայր այսքանս դոտի գրեցի, այլ չկայր թէ գրէաք. 1210, յունվարի 17» (Տես նաև 200 ա, 233 բ էջերը, իսկ 231 բ էջից իմանում ենք, որ նսային մի քարոզ ընդօրինակել է 1211 (=1762) թ. յունիսի 25 ին էջմիածնում: Այսպիսով ձեռագիրը եկել է էջմիածին և այստեղ 1770 թ. ընդօրինակություն է կատարել Հարություն Հաղբատեցին):

Ի դեպ, պրոֆ. Արրահամյանը ձեռագրերի ընդօրինակության տարեթվերը կրթեմն նշում

է կամայական կերպով օրինակ № 1786 ձեռագրի ընդօրինակությունը դնում է 1723 թվին (նկատի պիտի ունենալ, որ ձեռագիրը ընդօրինակել է մեկ անձնավորություն). մինչդեռ ձեռագրում Մարտիրոս դի Առաքելին վերագրված ժամանակագրությունը վերջանում է 1719 թվի Թահմազ Դուլի Խանի՝ Համադան, Քրմանշահ, Հավիդա և այլ քաղաքների նվաճումով, Հարց է ծագում, ինչպես կարող էր Մարտիրոս դի Առաքելը 1729 թվին անդի ունեցած դեպքերը ընդօրինակել: № 1786 ձեռագրում 1723 թվին:

Բիրլիսդլաֆիան մեծ մասամբ ընդգրկում է ժամանակագրություններ պարունակող այն ձեռագրերը, որոնք արդեն հրաատարակված են (օրինակ՝ Մարտիրոս Դրիմեցու, Սոփսես Երզնկացու, Հակոբ Հիսուսի որդու, Անդրիասի և այլն) մինչդեռ Մատենադարանում դանվում են մի քանի տասնյակի հասնող ժամանակագրություններ, որոնք բիրլիսդլաֆիայում հիշված չեն (տես՝ №№ 3276, 7273, 1737, 2191, 3425, 8979, 8100, 7584, 551, 3964 ձեռագրերը և այլն, և այլն):

Գրոֆ. Արրահամյանն իր առաջաբանում գրում է.

«...Պատմական տարբեր շրջաններում ու տարբեր թեմաներով դրադվող մասնադեաներին՝ գրչագրերում եղած այդ նյութերը՝ իրենց ուսումնասիրությունների ժամանակ մատչելի դարձնելու համար, Մատենադարանն անհրաժեշտ համարեց հրատարակել ներկա համառոտ բիրլիսդլաֆիան (էջ 207):

Սակայն բերված փաստերը, որոնք եղածի չնչին մասն են կազմում, ցույց են տալիս, որ պրոֆ. Արրահամյանը իր նպատակին չի հասել:

Վ. ՀԱԿՈՒԹՅԱՆ